



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 9

ՏՈՒՐԱԹ

26 ՓԵՏՐՈՒԱՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՏԱՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ . . . 25 »	Վեցամսեայ . . . 27 »	Վեցամսեայ . . . 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Շեքալ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասց. 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صاريان) مطبعه — باب عالی جاده می ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի հասցեայի քիւ 38



Չեռֆի, ոսֆի ու ոսֆի եւ ձեռֆի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅՅՈՒՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ. Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊԱԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյապխտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵՐԻՏԱՐ | 2 արշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ Երաշխանորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ


ԿԱՅՍ. ԹԱԳ. Ա.Ռ.Ս.ՆՁՆԱՇՆՈՐՀԵՍ.Լ Ա.ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՍԱՅ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ.

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ



ՀՐԳԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

- ՖԷՆԻՔՍ** Հաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
- ՖԷՆԻՔՍ** Հաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
- ՖԷՆԻՔՍ** Հաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չորգենաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան դրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Հաճօքուլօ խան, թիւ 52, 53, 54, 55, 56:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ
Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ի 9


ՇԱՔԱԹ

26 Փետրուար 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծնող ու պզտիկները : (Խմբագրական) . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Զղջումը . (Ոչա-
նաւոր) . — Ս. ԽԱԶՈՒՆԻ : Երեկոյթի օրեր, Աշտնանդեայ մասանիմ . — ՇՈՒՇԱՆ : Զուարթ
բառարան . — ԼԻԼԱ : Սիրուն կասակ մը (բարգ .) . — ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆԴԵԱՆ :
Արցունք (Բանաստեղծութիւն) . — ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՑԵԱՆ : Զուարթ ժամեր . — Զ. Մ.
Բարեկենդանի ճօրեր . — ԼԻԼԱ : 10,000 Տարի Սառնակոյթի մը մեջ . (Հանրագիտակի
քերթօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ԾՆՈՂՔ ՈՒ ՊԶՏԻԿՆԵՐԸ



Ընտանի տունը դպրոց մը և ծնողք առանին դաստիարակները պէտք է
ըլլան պզտիկներուն : Ասիկայ հարկւրաւոր անգամ՝ կրկնուած ակնյայտնի ճշ-
մարտութիւն մը ըլլալով հանդերձ, յաւալի է խոստովանիլ թէ՛ դեռ ըմբռնը-
ւած չէ այս էական կէտը մեր կարգ մը ծնողքներու մօտ :

Երբ տունը դպրոց և ծնողք դաստիարակ պէտք է ըլլան կըսենք, պէտք չէ
հասկնալ կամ հետեւցնել թէ՛ ծնողք պարտաւոր են répétitionը ընել վարժա-
րանին մէջ աւանդուած ուսման ծրագրին, այլ մեր ըսելիքը բոլորովին տարրիկ
հայեցակէտ մը ունի այս անգամ :

Կը հիանամ շիտակը ի տես օտար կրթութեան և կենցաղին վրայ, երբ
պատեհ առիթը կունենամ երբեմն մօտէն, շատ մօտէն դիտելով օտարներուն՝
հանդէպ իրենց պզտիկներուն տաժած գուրգուրանքը և սիրտ հատնումը :

Առէք ո՛ր և է օտարազգի տղայ մը ձեր դէմ և մի քաջութիւն անոր ուղղել իր հասակին, տարիքին և միջավայրին յարմար հարցումներ: Պիտի տեսնէք որ անոնք՝ այսինքն այդ միջինիկ աղաքները չպիտի քաջութիւն ժպտագէտ և համարձակ պատասխանել՝ ձեր մէջ մի հարցումին, զձեզ տփ ի բերան ձգելով, և թէ՛ առանց վարանումի և կամ տղայական չփայծածութիւններու: Մինչդեռ մեր ընկերները շատ քիչ բացառութեամբ զուրկ են այս գովելի բարեմասնութիւններէն: Հայ պզտիկը երբ մօտիկ կանչես ու անոր բան մը հարցնելու ըլլաս, նախ մօտենալու դժկամակութիւն ցոյց կուտայ, յետոյ կսկսի դէմքի ծամածռութիւններու, մօտը բերանը տանելով, ուր ուր գալով և ըն, և անկարելի է որ հարցումիդ կտրուկ պատասխան մը քաղես անոր բերնէն, խօսք մը, բառ մը իսկ դուրս չի տար ան:

Ասիկայ իրողութիւն մընէ զոր կրնաք փորձով հաստատել, մեր տղաքը զուրկ են համարձակութենէ և իրենց միտքը թափուր է միշտ: Անոնք վարժուած են ուտելիքի, խաղալիքի տալ ինքզինքնին, անոնցմով կանցընեն ժամանակնին ու իրենց տղայ օրերը կանցնին այնպէս, ինչպէս կանցընեն կենդանիները իրենց կեանքը բաց դաշտերու, խիտ անտառներու մէջ:

Բայց պէտք է դիտնալ որ հայ պզտիկը չէ յանցաւորը այս կէտին մէջ. բուն յանցանքը ծնողքներունն է, որոնք առանց նկատի առնելու իրենց պզտիկներուն մտաւորական մատղաշ զարգացումը, լիկ ֆիզիքականին ու կերպ խումին հոգ կը տանին:

Շատ անգամ տեսած եմ պզտիկներ, որոնք ընդօժին հետաքրքրութեամբ երբ մօտեցած են իրենց ուշադրութիւնը գրաւող առարկայի մը, նիւթի մը վրայ տեղեկութիւն ստանալու, ծնողք չախելով, սաստելով նետած են իրենց վրայէն՝ առանց պատասխանելու փոքրիկին հարցումին: Օրինակ:

— Մայրիկ, կըսէր պզտիկ աղեկ մը, ծովեզրին մօտ, երբ իր ծնողացը հետ պտոյտի ելած էին, մայրիկ, ինչո՞ւ սա քարերը ամէնը մէկ չեն... Ի՞նչ են այս սրածայր պզտիկ կլոր բաները, որոնք քարի պէս կարծր են...:

— Գնա՛յ բանդ, հիմա ժամանակ չունիմ պատասխանելու պարսպ բաներու...:

Ու տղան սիրտը կոտրած կը մեկնէր, կրկին զբաղելու իր ուշը գրաւած խնդրով, մինչ ատիկ իր մայրը ամուսնոյն հետ կը շարունակէր հակաճառութիւնը, սապէս:

— Երկու անգամ է ուշադրութիւն կընեմ կոր, աչքովս տեսայ...:

— Ի՞նչ կըսես, ի՞նչ ըրած ունիմ...:

— Ի՞նչ պիտի ըլլայ, քովէն անցած ատենդ թեւդ թեւին զարկիր...:

Կը տեսնէ՞ք մեր տգէտ ծնողաց սա սառուցում և իսկական վիճակը: Կինը իր ամուսնոյն դէմ տածած նախանձուտ կիրքը յագեցնելու համար մերժեց իր հեղեհատորին փոքրիկ հետաքրքրութիւնը գոհացնել, որ ձեռքը ծովային ճրճիներու սրածայր պարէն մը բռնած, ինչ ըլլալը հասկնալ կուզէր. մինչդեռ եւրոպացի մայրը ընդարձակ տեղեկութիւն պիտի տար իր զուկին սիրոյն, անոր միտքը մարզելով իրեն հասկանալի ոճով մը:

Ասանկ է մեր պզտիկներու և ծնողքներու վիճակը, մենք մեր տղայ կարեւորութիւն չենք տար, և անոնց ընկերութիւնը, ներկայութիւնը չենք սիրեր, միշտ վրանուս նետել կուլենք զանոնք, իբր թէ զղուելի անասանելի ըլլային անոնք :

Շիտակը կը ցաւիմ, ամէն անգամ որ դիպուածը դէմս կը հանէ նոյն օրինակ տեսարաններ, ու մօտէն կը տեսնեմ անպատեհ վարմունքը մեր ծնողքներուն, հանդէպ իրենց զաւակաց, և կզմայլիմ յիշելով օտարազգի կրթութիւնը, օտարներուն հոգը իրենց պզտիկներուն և տուած կարեւորութիւնը, զաւակսիրութիւնը և տաք վերաբերումը անոնց նկատմամբ :

Տղուն ուշիմութիւնը պէտք չէ փթացնել, այլ իբր կատարեալ ու չափահաս ընկեր, անոր մէն մի հետաքրքիր հարցումին պէտք է պատասխանել, դոհացում տալ անոր, որպէս զի աղան, իր մատաղ տարիքին պատրաստուի ապագային, և կամ կենդանիի մը պէս ըկ ուտելով, զրօսանքով չանցընէ իր մատաղաջ օրերը :

Որչափ աղան հարցումը սիրէ, պոնքան իր ուշիմութիւնը կը հաստատէ, կուլ տղաք չեն հետաքրքրուիր երբեք, ուշիմ ու ապագայ խոստացող տղան է որ իր ամէն տեսածին դիտակցութիւնը, բացատրութիւնը կը պահանջէ, ու երբ այդպիսի պզտիկի մը հանդէպ լռութիւն պահուի և կամ կարեւորութիւն չտրուի, այն ատեն փթացնել կըլլայ անոր խմոր միտքը ու անոր ըմբռնումի բիշտն չի կրնար դիւրին տեղը ըլլալ :

Կարեւորութիւն տուէք ձեր պզտիկներուն, անոնց հետ ընկերով մը պէս վարուեցէք, ձեր շինիչ պատասխաններով դոհացում տուէք անոնց մէն մի հետաքրքիր հարցումին, որպէս զի ապագային ուշիմ ու համայնագէտ զաւակներ վայելելու բաղդը ունենաք :

Փոխանակ եւրոպացիին ֆանթեզի ծախքերը, թուալէթները, չռայլութիւնները կապկելու, անոնց՝ տղայ կրթելու և իրենց պզտիկներուն հետ ունեցած վարուելու կերպը ընդօրինակեցէք :

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Ձ Ղ Ձ Ո Ւ Մ Ը

Գործած մեղեքուս ներե, Հա՛յր գութի,
Ներե որ ըլլամ քեզ փառաբանող,
Խաբկանքի զոհ մ'եմ ես ալ: Կանացի,
Աղօտ սեւերը՝ եղան զիս խաբող:

Թո՛ղ վեճ սքուրեան խորանիդ առջեւ,
Իմ վերջին բառերն ըլլան արժանի,
Քու մեծ շնորհիդ՝ փառքեան պարգեւ,
Ու պիղծ սեւերուն հետքը բոզ հասնի,

Հոգ չէ քե ներմանդ օրն իսկ վեճական,
Իմ սրժիս քաղուն յոյզերը նորէն,
Տեղոտ քափով մը մեղկ ու խօլական,
Մեղքի օրերը պիտի վերյիշեն:

Անոր համար դուն ալ մեծ բարեբար,
Սովրեցուր ըլլալ ինձ համբերասուր,
Որ հոգիս ըլլայ մաքրուած պաշտաս,
Ներումիդ անեղ օրուան փրկարար:

Ս. ԽԱՉՈՒՆԻ

ՔՆԱՃԵԱՆ - ՆՈՒՐԵԱՆ

ՀԱՐՍՆԻՔԸ

Մայրաքաղաքիս երկու հանրաժանօր գերասաններուն վայելած հաւքաւին արժանի հանդիսաւորութիւնով մըն եր որ նախընթաց երկուշաբթի, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ, Ազն. Վահան Էֆ. Քնաճեանի ընդ Ազն. Օր. Աննա Նուրեանի պատկառութեան հանդէսը, փեսին եղբոր Ազն. Սարգիս Էֆ. Քնաճեանի կնիսհայրութեամբ:

Երկու կողմի ազգական ու բարեկամներէ զատ, Պոլսահայ ընտելագոյն պատկառարկի պատկանող բազմաթիւ ընտանիքներ հաւաքուած էին Ս. Երրորդութեան փառաւոր տաճար որ յոյսերու մէջ կը շողար եւ զգեցած եր իր բոլոր շէնդ զարդարանքները:

Բերայի ֆարգիչ Տ. Հնայեանի Սրբազան, զգեսաւորուած, եւ իր շուրջն ունենալով փարդապէսներ ու ֆահաւաններ, նախագահեց հանդիսին եւ գեղեցիկ խրատականով մը օրհնեց այս գերազանցապէս բարեպէտ ամուսնութիւնը, որով առ յաւիտէ կը միանային երկու սիրուած եւ անուանի գերդաստաններուն հաւակրեցի շառաւիղները, երկուքն ալ օժտուած ընկեր ընկեր յատկութիւններով եւ ձիրքերով:

Պատկի արարողութենէն վերջ, հանդիսականները առաջնորդութեամբ Տէր եւ Տիկին Վահան Էֆ. Քնաճեանի, ուղղուեցան Սրբէնիս, ուր Քնաճեանի իրենց աւանդական ասպնջականութեամբ պատուեցին ու մեծարեցին հարսնէտները, ախորժաբէր շիւսեղանի մը շուրջը, շամբանեաներու յորդ փոփոխութեան մէջ, բարեկամարարութիւններ ու շնորհաւորութիւններ խօսելով նորաստեղծ ամուսնին հասցէին:

Ծաղկեփունջեր, նուէրներ, հեռագիրներ հետաւոր եւ մօտաւոր ազգականներէ ու բարեկամներէ, ցուցադրուած էին Սրբէնիսի այս շէնդ արահներուն մէջ, ուր հարսնէտները ձշմարտապէս գեղեցիկ վայելիք մը ունեցան:

ՀԱՆՐԱԳԻՏՍԿԻ խմբագրութիւնը իր շնորհաւորութիւններն ալ միացնելով նորաստեղծ ամուսնին ուղղուած շնորհաւորութիւններուն, երջանիկ ամուսնութիւն մը կը մաղթէ Տէր եւ Տիկին Վահան Էֆ. Քնաճեանի, եւ իր խնդակցութիւնները կ'ուղղէ երկու նորաձոյզ գերդաստաններուն, իրենց բարեպէտ խնամութեամբ հաւար:

ԵՐԵՎԱՆԻ ՕՐԵՐ

ԱՂԱՄԱՆԴԵԱՅ ՄԱՏԱՆԻՆ

Խորագիր մը կուզէի ընտրել, որ ըլլար տարբեր ու սովորականէն շատ տարբեր, ու ընտրեցի աղամանդեայ մատանին, վերջապէս աղամանդ կայ խնդրոյն մէջ, սուղ բան մը, չահու վերարեւելալ առարկայ մը: Ու մարդ միշտ պատրաստ է հետաքրքրուիլ չահով:

Չուզեցի ընտրել նիւթ մը որ կիներու կեանքը պրպտէ, չուզեցի որ սանկ, մէկ գէշ բարձր մը պարզեմ, ծանօթ կեանքի սովորական հարցերու տակ, Չուզեցի ընկել ատոնք, որովհետեւ սովորական դարձան, ծամօժմուած փոռած նիւթեր են ամէնքն ալ:

Բայց նորէն չուզելովս իսկ միտքս գրաւեց քանի մը օր առաջ լուսն խօսակցութիւնս, որուն ակամայ ներկայ գտնուած էի ու հիմա համառօտ պիտի նկարագրեմ տալիս. երեկոյթէ վերադարձող խումբ մը մանկամարդ աղջիկներ էին անոնք, որոնցմէ մէկ քանին դպրոցական է մէկ քանին ալ տունի աղջիկներ, բայց ամէնքը նոյն դաղափառներով լեցուն գլուխներ կը կրէին իրենց իրանին վրայ, Եւանդոտ խօսակցութեան մը բռնուած էին որ երբեմն կ'ընդհատուէր լեցուն խնդուածքի քրքիշներով: Խնդրոյ նիւթ ըրած էին երեկոյթի աղջիկները, մանկամարդ կիները, երիտասարդները, ասոնց ամէնուն արդուաւորը, շարժուածքը, խօսուածքը, նայուածքը ու քալուածքը, սակայն այս ամէնուն մէջ միայն երկու սեռէ ձերերը անկիւն մը չէին զբաւած:

Ինչպէս ըսի արդէն, խօսակցութեան նիւթ եղած էին բացառապէս աղջիկները, միշտ քաջքնութիւններով, երիտասարդները նուազ բարեբաղդ էին այդ մասին: Թէ այն ինչ օրերը բաց տէքօթէ մը ըրած էր, թէ այն ինչ անձաշակ փունջ մը կը կրէր կուրծքին վրայ, թէ այսինչին վարդազոյն չըջող գետտը երբեք, երբեք չէր վայլած իրեն, թէ ուրիշ մը սեւ հագած էր որ կը նմանէր խաւար գիշերուան մը ամպոտ երկինքին, եւ ուրիշ մըն ալ կապոյտ հագնելով փորձած էր նմանիլ միօզօթիսին, բայց

չառ չքեղ եղած էր, և տակաւին այն ինչերու ահագին չղթայէ մը ետք կուգայ Օր. Զապէլլին մատանին որ երեկոյթին մէջ ամէնուն իրացում առթած էր:

Ահա հոս կ'սկսի բուն խճճանքը: Մէկը մատանին արժէքը կը գնահատէ, անոր նրբութեան, աղամանդներու ձեւին վրայ ճառ խօսելով, ուրիշ մը քանի մը հարկւր ոսկի աւելցնելով, մէկն ալ հակառակը կը պնդէ, և վերջապէս կը համաձայնին ընդունելու թէ, մատանին գէշ չէր, բայց ձեւքերը, օհ, ձեւքերը Աստուած իմ կը բացագանչին ամէնքը մէկ, սեւ ու կոշտ մորթ մը՝ կաշիի պէս հաստ, ճիշդ նման սպասուհիի ձեւքերու:

Ու մատանիի ահագին վէճէն ետք կարգաւ, փեղոյրը, ժանեակը, ժապաւէնը, ամէնքն ալ իրենց խոշոր բաժինները կ'ունենան այդ օրիորդներու խօսակցութեան մէջ: Ահա մեր աղջիկներու մէկ զեղեցիկ, չըսելու համար էն տգեղ բարձր խճճանքը:

Ինչո՞ւ երեկոյթէ վերադարձին չէին զբաղեր, անոր կաղամակերպութեան, անոր մէջ գտնուած զբօսանքներու ու տեղի ունեցած խօսակցութիւններու քննադատութեամբ, ինչո՞ւ չէին ըստ թէ ո՞ր զբօսանքները կըրնային աւելի հաճելի ու հրահանգիչ ըլլալ, ինչո՞ւ այս կարծիքներու փոխանակութիւնը չէր ըլլար անոնց մէջ ու վայրկեանական խօսակցութեան նիւթ ըրած էին, ժանեակը, ժապաւէնը, փեղոյրն ու մատանին:

Ինչո՞ւ:

Որովհետեւ իրենց մանկութենէն այդ տեսած են, որովհետեւ կենդանի պատկերներ միշտ ունին աչքերնուն առջեւ, որովհետեւ մայրերը ջամբած կաթերնուն հետ, կուտան նաեւ անոնց արդուզարդի ունայնախոթութիւնը, որովհետեւ դպրոցն ալ չը կրնար արմատախիլ ընել այդ սին գաղափարները:

Ու բաց ի սակէ, ինչպէս ամէն անգամ, այս անգամ ալ կը պարզուի մեր աչքերուն առջեւ, թերի դաստիարակութեան մը յոռի հոսանքը:

Խճճանքը սովորական զբաղում մը դարձած է ամէնուն համար, մանաւանդ կին սեռին անգործ մասին, համար որ իր պարապուրդի երկայն ժամերը կը նուիրէ խճճանքի:

ՇՈՒԱՐԹ

ՇՈՒԱՐԹ ԲԱՌԱՐԱՆ

ԲԱՐԵԿԱՄ. — Բարեկամներ . . . չիկայ բարեկամ:

ԴՐԱՄ. — Անցագիր բարեկամութեան սալօնին:

ԿԻՆ. — Անճանօթ ինչ — վարդին ու կարքին մեջտեղ բանիկ մը . . .:

ԱԶՔ. — Ուղեղին պատահանը:

ՃՇՄԱՐԻՏ. — Անդրդաստոյգ մարգարիտ:

ՍՈՒՏ. — Ճեմարսութեան աղցանը:

ՍԻՐՏ. — Գոց նամակ մը անհասցէ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ. — Parlor Matche:

ՕՐԻՈՐԴ. — Սիւս որ չունի դիւս:

ԴԻՄԱԿ. — Երեւի քան ըլլալ:

ՈՍԿԵՐԻԶ. — Լիւս եւ ուշին:

ԴԵՂԱԳՈՐԾ. — Extrait fluide de ըխաւուր:

ԲԺԻՇԿ. — Ինչ որ ըսել պէտք էր հիւանդը առաջացնելէն ետք:

ԿԵԱՆՔ. — Արթուն Բուն:

ՄԱՀ. — Բուն զարթնում:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ. — Այս շաբաթուան ամեն ապօրէն բան:

ՄԵԾ ՊԱՀՔ. — Գալ եւ յաջորդ շաբաթներու կեանքը:

ՄԵԹՈՏ. — Յոյներուն մեքոսոս ըսածը, որ մեր դասընթացներուն եւ դասագիրքերուն մէջ կը փայլի տեսակ մը մեքոսաւոր չգոյութեամբ:

ՊԱՏՈՒՀԱՆ. — Տուններուն աչքը:

ԼԵՊԼԵՊԻ. — Բաղաճակրեալ նոհուս:

ԱՆՈՒՇ. — Կոյսին ակնարկը, տղային տակը:

ԱՂՕԹՔ. — Հոգիին հացը:

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՆ. — Արդի երիտասարդներուն քաթիքալը:

ԵՐԱԶ. — Ինչ որ կը փափաքեն ունեցալ, ընել կամ ըլլալ:

ԲԱՐԻՔ. — Ալ բաւ է հերիք ըրիք:

ԶՔՕՍԱՆՔ. — Արդի երիտասարդներուն աղջիկեանք:

ՊԱՐԱՀԱՆԴԵՍ. — Չափաքաններու մանկապարտէզ:

ԴԱԳԱՂ. — Տախտակ անվոյր մարդ նաւակին:

ԺՊԻՏ. — Արդի օրիորդներու մաքուր ակումբներին ցուցադրելու միջոցը:

ՍՏԱՄՈՔՍ. — Պօն մառեկ:

ԳԻՇԵՐ. — Օրուան սուգը:

ԼԻԼԱ

ՍԻՐՈՒՆ ԿԱՏԱԿ ՄԸ

— Պարոն տը Մէօվէն բարկութենէն կը-
րալ կտրած «Տղաս ասանկ չ'ըլլար» կ'ըսէր,
չպիտի թող տամ որ մեկնիք դեռ նոր ե-
կաք, հետեւաբար քաղաքը ո'ւ է գործ մը
չ'էք կրնար ունենալ :

— Բայց ! պարոն , պատասխանեց երի-
տասարդն ալ ոչ նուազ ուժգին շեշտով մը ,
ներեցէք որ ձեր ըսածին հակառակը պնդեմ :
Ձիւ կանչող գործը կարեւոր է և հոն իմ
ներկայութիւնս անհրաժեշտ է . . . պէտք է
գիտնաք թէ երէկ իրիկուն Ռիչլիէօ փողո-
ցը , Անկլըդէրի պանդոկը իջայ , հոն այս
առտու առեւի խիթերով տառապեցայ և
այս խիթերու հետեւանօք մեռայ : Ժամը
վեցին թաղուելու համար խօսք տուած եմ :
Կը հասկնաք ուրեմն որ , չպիտի կրնամ թե-
րանալ ռանտէվուիս որովհետեւ հակառակ
պարագային այս քաղաքին մէջ , ուր դեռ
նոր կ'երեւամ , թեթեւօլիկութեան դժըն-
շակ մակդիրով պիտի մկրտեն զիս :

Երիտասարդը , այս պատճառաբանու-
թեան վրայ զոր անվիճելի կը նկատէր , ա-
մենայն քաղաքավարութեամբ բարեւեց և
մնաք բարովը կոխեց :

II

Առանց միայն յոգնեցնելու կրնաք երե-
ւակայել Պ. տը Մէօվէնի շուարու մը այս-
պիսի եզակի տարօրինակութեան մը հան-
դէպ : Նախ քան կտրեցաւ , զարմանքէն
բերանաբաց , աչքերը , չաքարանոյի պէս
փայլուն , զարդարուն վարդագոյն դէմքին
վրայ խոշոր խոշոր բացած : Սակայն , նկա-
տելով որ սրամիտ ըլլալու յաւակնոտութիւնը
ունէր , ըրաւ չ'ըրաւ բացատրութիւն մը գտաւ
այս դէպքին : Արդարեւ իր տուած մեկնու-
թիւնը յարմարագոյնը և շատ զուարթ ըլ-
լալու էր անտարակոյս , վասն զի մէկէն ի
մէկ , հնչուն և բարձր ձայնով մը խնդալ
սկսաւ , ինչ որ ամբողջ տունը լեցուց և
ցնցեց կարծուկ սրունդներուն վրայ հաս-
տատուած երջանիկ փորիկը :

« Հոսկեցայ ! ըսաւ իւրովի . . . իմ թուա-
նշաններովս ձանձրացուցի խեղճ տղան . . . » :

Դրամական խնդիրները ստորին բան
մ'ունին , որմէ սիրահարները կը խորշին :
Աս տղան ալ որ շատ փափկանկատ թը-
ւեցաւ ինծի , չհամարձակեցաւ լռեցնելու
զիս և այս խուսափողական միջոցին դի-
մեց . . . Կրնաք խորհիլ թէ այս կատակը
սքանչելի ճաշակ ունեցողի մը գործը չէ ,
կատակին նիւթն ալ շատ զուարճացուցիչ
չէ . բայց վնաս չունի . գաւառացիի մը հա-
մար գէշ գիւտ մը չէ . . . հետեւաբար պիտի
չնորհաւորեմ զինքը :

Ծերուկը , շարունակ խնդալով , կնոջը
սենեակը գնաց :

« Սիրելիս , քեզի անանկ թօհաֆ պատ-
մութիւն մը պիտի ընեմ որ խնդալէն պիտի
մարիս . . . երեւակայէ որ փեսանիս
հիմա առաւ քալեց , ինքզինքը թաղել տա-
լու համար ! » :

Տիկին տը Մէօվէն դող ելաւ և ամուս-
նոյն երեսն ի վեր նայելով խոփու դէմք մը
առաւ : Այս կինը խիստ բնաւորութիւն մը
ունէր և հեզնութիւնը բնաւ չէր սիրեր :

« Բայց ասիկա շատ ստոյգ է , սիրելիս ,
Յուդարկաւորութիւնը ժամը ծին տեղի պի-
տի ունենայ : Այս լուրը ինք ան-
ձամբ տուաւ » :

Այս անգամ , Տիկ. տը Մէօվէն յուզուե-
ցաւ : Խորհեցաւ թէ ամուսինը ջղագարած
է և թէ հետեւաբար հարկ էր զայն հիւանդա-
նոց զրկել : Պ. տը Մէօվէն արգահատեցաւ
վերջապէս կնոջը վիճակին . արդէն բարի
մարդ էր . հետեւաբար իր սրամտութեան
չնորհիւ գտած մեկնութիւնը պարզեց :

Տիկին տը Մէօվէն եղածը քիչ մը ան-
վայել գտնելով հանդերձ , ժպտելու զի-
ջաւ : Մարդ բնականաբար ուզելով քիչ
մը ներողամտութիւն կը չնորհէ ապագայ
փեսայի մը որ տակաւին թեկնածու է միայն :
Գալով Օրիորդ տը Մէօվէնին , նշանածը ,
անիկա կարմրեցաւ ամենաչնորհալի և ամե-
հասիրուն ձեւով մը զոր կրնաք երեւակա-
յել :

Այս ամէնը աղէկ , սակայն ժամանակը
անցած , օրիորդին թիկնածուն չէր վերա-
դարձած և բացակայութիւնը կենցաղագի-
տութեան գծած սահմանէն անդին անցնե-
լու աստիճան կ'երկարէր , պատուական Պ.
տը Մէօվէնն ալ վերջապէս սրտնեղիլ սկսաւ :

ժամացոյցը եօթը կը զարնէր, համբա-
րութիւնը հատաւ և միտքն ալ կտոր մը ան-
հանգիստ եղաւ: Շուտ մը Անկլըթէրի պան-
դոկը մանչ մը զրկեց պատուիրելով որ տե-
ղեկանայ այն երիտասարդին մասին որ առ-
ջի գիշեր Արրասի կառքով եկած էր, մի-
միայն առումնանալու նպատակաւ:

Մանր վազելով վերադարձաւ և բառ-
առ բառ կրկնեց պանդոկատին բերնէն
խմացած լուրերը: Այդ ճամբորդը, որ առջի
գիշեր Արրասի սուրհանդակով հոն իջած
էր, առտուն մեռեր է և ժամը վեցին թա-
ղեր են զայն, իր վրայ բան մը չեն գիտեր
եղեր, միայն սա որ, գաւառացի ազնուա-
կան մ'էր և ամուսնանալու համար մայրա-
քաղաք եկած էր»:

Պ. տը Մէօվէն, այս լուրը առածին պէս,
մազ մնաց որ խելքը թւոյնէր: Իր երեւա-
կայական սրտեւտութեան քայքայուիլը տես-
նելով, կնոջ ու աղջկանը առջիւ խոնարհ և
ամօթահար դիրք մը առաւ: Օրիորդը բան
մը չէր ըսեր, սակայն լռին կը հառաչէր ան
աղուոր գավալիէին համար, որ քիչ ատենէն
ամուսինը պիտի ըլլար:

Ժամը իննին, իրիկուան ճաշի պահուն,
չատ ուշ ատեն, սպասաւոր մը եկաւ և ի-
մացուց թէ «Քիչ առաջ ներկայացող աղ-
նուականը կը փափաքի Պ. տը Մէօվէնի հետ
տեսակցիլ»: Մերուկը նստած տեղէն վեր-
ցատկեց, խռովալից ակնարկ մը նետեց շուր-
ջը, ոտքի ելաւ և իր քիչ շատ պարարտ
մարմինն ներածին չափ շտութեամբ մը իր
սենեակը փութաց:

Իր աթոռը նստաւ չնստաւ, շնչասողաւ
և առանց նախաբանի պօռտց:

«Էհ! նայինք, փեսաս, այս կատակին
նշանակութիւնը պիտի բացատրէք ինձի:
Ինչպէս կ'ըլլայ որ դուք Դրասիի ասպե-
տը...»:

— Կատակ չէ աս, պարոն, քաղցրու-
թեամբ պատասխանեց երիտասարդը, իր
բազկաթոռին մէջ տեղաւորուելով: Ես ձեր
կարծած անձը չեմ սակայն, իմ անունս Պ.
տը Դրասի չէ, Պ. տը Սէնթ Անտրէ է:

«Արդարեւ այս ամենը լուսաբանութեան
կը կարօտի, ես ալ շնորհքով բացատրու-
թիւններ պատրաստած եմ զորս ձեր տրա-
մադրութեան տակ կը դնեմ: Պիտի աւելցը-

նեմ նոյն իսկ, առանց յարգանքի պակա-
սութեան, որ զանոնք շատոնց ներկայա-
ցուցած պիտի ըլլայի, եթէ ձեր ըրած ջերմ
ընդունելութիւնը միջոց տուած ըլլար այս
մասին»:

Պ. տը Մէօվէն նշանացի հասկցուց թէ
պատրաստ էր մտիկ ընելու: Երիտասարդը
նստարանին կռթնելով, սկսաւ պատմել հե-
տեւեալ կերպով, բնականաբար զանց առ-
նելով այն քանի մը մանրամասնութիւնները
և խորհրդածութիւնները որոնք կրնային ան-
հաճոյ և անօգուտ թուիլ ծերուկին:

III

1669 Փետրվար ամսոյ սկիզբը, չոր ա-
ռաւոտ մ'էր, գետինը ձերմակ բարակ եղ-
եամով մը ծածկուած էր, վերոյիշեալ դէպ-
քերուն տեղի ունենալու ճիշդ նախորդ օրն
էր: Արրասի կառքը տքնելով սեպ զառի-
վերէ մը վեր կը մագլցէր: Ամբողջ ճամ-
բորդները կառքէն վար իջած էին ձիերուն
բերուր թեթեւցնելու համար, սակայն ձիերը
նորէն կը տքային, կը ֆշային, կը պրկէին
մկանունքներին, կառավարին աղդու խա-
րազանէն և ախոռին մօտեցած ըլլալու մոռ-
ծումէն քաջալերուած ճիգով մը: Իրաւ ալ
Բարիզ հասնելու համար քանի մը մղոն
ճամբայ միայն կը մնար: Անասուններուն
քթի ծակերէն, կռնակէն և փայլուն գա-
ւակէն ելլող շոգին քալողներուն շունչին կը
խառնուէր, թեթեւ բարակ մշուշ մը կազմե-
լով որուն վրայ կը ծիծաղէր կարծես, հորի-
զոնին վրայ, ահագին կաս կարմիր և կսկը-
լոր արեւը իր խոշոր երեսները ուռեցնելով:
Մէկ մ'ալ յանկարծ արեգակը կը փայլի և
իր ցրուած ճառագայթները կը կառչին ծա-
ռերուն մերկ ոստերուն և ամենէն պզտիկ
ճիւղերուն, զանոնք ամենէն անստգիւտ
ադամանդներով զարդարելով:

Կարաւանին առջեւէն երկու երիտասարդ-
ներ կը քալէին. իրենց թեթեւաչարժ սրունդ-
ներուն շնորհիւ ամէնքն ալ անցած էին:
Մանդօներու մէջ փաթթուած, ուրախ զուարթ
կ'ընթանային, ապրիլէն անդիէն խօսակցե-
լով իրենց գործերուն, յոյսերուն, երազնե-
րուն վրայ, այն աղուոր եռանդով ու վըս-
տահութեամբ, որոնք երիտասարդութեան
յատուկ են:

Ասոնք Պ. Պ. տը Սէնթ Անտրէ և տը Դրասի կը կոչուէին : Դեռ նոր զիրար ճանչցած էին և ճամբորդութեան ատեն ծանօթանալով իրարու չափազանց մտերմացեր էին : Առաջինը Պ. տը Վօպանի քով կ'աշխատէր : Բարձրահասակ և աղուոր դէմքով էր . խիստ կերպարանք մ'ունէր որ տարօրինակ և զգալի կերպով կը հոկասէր ի բնէ զուարթ բնաւորութեանը հետ : Ընկերը քիչ մը աւելի երիտասարդ , վտիտ բայց չնորհքով դաւառացի ազնուական մ'էր : Առաջին անգամ ըլլալով Բարիզ կ'ուգար . նպատակը հարուստ օրիորդի մը հետ ամուսնանալ էր : Այդ օրիորդը հօրը բարեկամներէն մէկուն մէկ հատիկ զաւակն էր և ամէն կերպով կատարեալ աղջիկ մ'ըլլալը կ'ըսուէր :

Պ. տը Սէնթ Անտրէ իր ընկերոջ այս ծրագրին կատարեալագէտ տեղեակ էր , ինչպէս որ տը Դրասիի ասպետն ալ գիտէր թէ Պ. տը Սէնթ Անտրէ իր արձակուրդը Սէն Ժան լը Ռօնի մօտ բնակող ծնողացը քով պիտի անցընէր :

« Էհ ! թէ որ կը թոյլատրէք , ձեզ տեսնելու պիտի գամ ըսաւ Պ. տը Դրասին , բայց նախ կը փափաքիմ ներկայացնել ձեզ ապագայ կնոջս և անոր ընտանիքին . . . : Այսօր Բարիզ պիտի հասնինք : Ես , Ռիչլիէօ փողոցը , Անկլըթէրի պանդոկը պիտի իջնամ : Վաղը ժամը վեցին ատենները ելէք եկէք զիս առնելու համար : Ճաշելէ առաջ զիս քաղաքին չորս կողմը կը պտտցնէք » :

Այս միջոցին , կառքը զառիվերին գազաթը հասած էր : Իրմէ առաջ անցող և հիմա սպասող երիտասարդներուն քովը կանգ առաւ : Ճամբորդները նախապատուութեան կարգով տեղերնին նստան , ոմանք տքնութեամբ մագլցելով պատուանդանին վրայ , իսկ ոմանք ալ մէկ ոստուժով ցատքելով , իրենց տարիքին , մարմնեղութեան կամ դիւրաշարժութեան համեմատ :

Ամենէն առաջ գիրուկ Քարուշին կրօնաւոր մը որ , իր սքեմին մէջ չատնեղուելուն , գրեթէ ձիու մը չափ կը ֆշար . յետոյ քաղաքացի բաւական տարիքոտ կին մը պղնձագոյն և չափազանց գէր . յետոյ սիրուն ալրի կին մը որուն խօսուէն աչքերը , զինուորական համազգեստ կրող Պ. տը Սէնթ Անտրէին խրոխտ կերպարանքը մանրամաս-

նաբար զննելով հանդերձ , անգուժ արտայայտութիւն մը բնաւ չ'ունէին : Վերջապէս մեր երկու երիտասարդները՝ որոնց հետեւեցան քանի մը հասարակ մարդիկ :

Ատկէ վերջը , քանի մը վայրկեան իւրաքանչիւր ոք կրցածին չափ հանգստօրէն տեղաւորուելու զբաղեցաւ . յետոյ ընդհանուր խօսակցութիւն մը սկսաւ , գոնէ որ չափ որ կը թոյլատրէր երկաթներուն , պատուհանի ապակիներուն , զանգակներուն , խարաղանի շաշիւներուն հանած ժխորը որ կը թնդացնէր ամբողջ կառքը : Այս պատճառաւ ոմանք կ'ստիպուէին ձայներնին բարձրացնելու և ոմանք ալ ականջնին տընկելու , ինչ որ բնաւ չ'էր փեսսեր ընդհանուր համաձայնութեան : Ընդհակառակը բոլոր դէմքերն ալ վը ժպտէին ցողացնելով այն գաղտնի ուրախութիւնը որ յառաջ կուգայ ուղեւորներուն սրտին մէջ , ճամբորդութեան լմննալու վրայ ըլլալուն մտածումով :

(Մնացեալը գալ շաքրու)

GUSTAVE HUE

(Թարգմանեց)

ՄԻՐՍՍԵԼ ԵՍԼՊՍԵՂԵԱՆ

Գատըգիւղ

ԱՐՑՈՒՆՔՍ

Անհաւին խոր՝ քաւուսքին մեջ ,
Սիրոյ անյագ ծաւալներ՝
Անուե երգէր կը նուազէն :

Ու նուազուն՝ մրմունջներով ,
Ձեփիւն ալ իր ջերմ համբոյրներ՝
Ծաղկանց նախքին կը դրուէ :

Խռովայոյ՝ ծովուն վրայ ,
— Ձերդ ըսպիսակ վարդի փունջեր՝ —
Սիրոյ — ալեւիկ կը փրցուին :

Գեղաժպիտ արեալոյսն ալ ,
— Հրապոյրի անհուն ծով մը՝ —
Լոյսի հեղեղ կը ծաւալէ :

Աղամանդեայ՝ այգուն ցօղը ,
Ձմրխափայլ մարգագետինն՝
Սիրոյ — վե՛տ՝ արցունքներս են . . . :

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ

ՉՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Մերար մը թուղթ կառնեմ ու անոնց մէջէն քսան հատը զատելով տասը մարդու երկերկու հատ կը հաւնեցնեմ. վերջը անոնց ամէն մէկուն հաւնած թուղթերը մէկիկ մէկիկ կը հանեմ:

Թե ինչպէս կրնեմ

Քսան թուղթը տասը զոյգի բաժնելով սեղանի մը վրայ կը շարեմ. յետոյ տասը մարդիկնեւ մէկ մէկ զոյգ տալով կը յանձնարարեմ մտքերնին պահել ընտրած թուղթերնին: Միւս կողմէ նոյն սեղանին վրայ կաւիճով չորս կարգի վրայ կը դրեմ մէկէն մինչեւ քսան թիւերը՝ իւրաքանչիւր թիւին վրայ դնելով սա բառերուն Mutus, Dedit, Nomen, Cocis գիրերը, իրարմէ անջատ և սա կերպով.

M	u	t	u	s
1	2	3	4	5
D	e	d	i	t
6	7	8	9	10
N	o	m	e	n
11	12	13	14	15
C	o	c	i	s
16	17	18	19	20

Գիրերը և թիւերը իրարմէ այնչափ անջատ կը գրեմ որ երբ թիւերը ծածկուին թուղթերով, գիրերը երեւնան: Յետոյ իւրաքանչիւր մարդու հաւնած զոյգերը՝ առանց իրարմէ բաժնելու կը ժողվեմ և առաջին զոյգէն սկսած՝ բանալով մէկը թիւ 1ին և միւսը 13ին վրայ կը դնեմ, որովհետեւ այդ երկու թիւերուն վրայ է որ կը գտնուի միեւնոյն m գիրը: Վերջը երկրորդ զոյգը բանալով մէկը թիւ 2ին և միւսը 4ին վրայ կը դնեմ, քանի որ այդ թիւերն ալ կը ցուցնեն միեւնոյն u գիրը. ու այսպէս շարունակաբար բոլոր զոյգերը մէկիկ մէկիկ կը

շարեմ միեւնոյն գիրերը ցուցնող թիւերուն վրայ՝ այնպէս մը ձեւացնելով որ խաղին հմայքը այդ կախարդ բառերը կաղմող գիրերուն վրայ է: Թուղթերը ամբողջովին շարելէս ետքը սեղանին շուրջը գտնուողներէն ու է մէկուն կը հարցընեմ թէ՝ որ կարգերուն մէջ կը գտնուին իր հաւնած թուղթերը. ու երբ ան ըսէ ինծի թէ՝ մէկը առաջին ու միւսը երրորդ կարգին մէջն են, անմիջապէս կը վերցընեմ է գիրին տակի թուղթերը, և կ'ըսեմ թէ անոնք էին իր հաւնածները, որովհետեւ այդ գիրն է միայն առաջին և երրորդ տողին մէջ կրկնուածը: Իսկ երբ ուրիշ մը ըսէ ինծի թէ իր հաւնած թուղթերը առաջին և չորրորդ տողերուն մէջ կը գտնուին, անմիջապէս կը վերցընեմ s գիրին տակի թուղթերը, քանի որ այդ գիրն է կրկնուածը այդ երկու տողերուն մէջ. ու այսպէս շարունակաբար կը հանեմ ամէնուն ընտրած թուղթերը:

Կարեւորը

Ինչպէս կը տեսնուի վերի բացատրութենէն, այս խաղը հմայող գաղտնիք մը չունի. միայն թէ անգամ մը որ կարենաք հաւատացնել ներկաներուն թէ խաղին բուն գաղտնիքը այդ մոգական բառերուն վրայ է, ամէնուն հետաքրքրութիւնը կը շահիք ու հաճելի ժամանց մը կ'ունենաք: Բարի զուարճութիւն:

2. Մ.

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ռոտտսթոյ. — Խ. Պ. էֆ. — Հոս Սահակ էֆէնտիէ միայն 80 զրուշ ստացանք, հաճեցէք ամբողջ հաշիւը մեզ զրկել նամակով մը: Մեքսիկ. — Ս. Ս. էֆ. — Ոչ նամակ և ոչ դրամ զրկած ունիք, պատճառ:


Բալու. — Տ. Գ. էֆ. — Հաճեցէք բաժնեգիրը զրկել մեզ:

Պաղտատ. — Բաժնեգիրները ո՛ւր մնացին, նամակ ալ չէք գրեր:

Դամասկոս. — Վ. Վրդ. Բ. — 1905 Յով. 1էն հաճեցէք բաժնեգիրը զրկել մեզ:

Վառնա. — Հ. Բ. էֆ. (Գործակ.) — Հաճեցէք մեր հաշիւները ամբողջովին մեզ հասցնել:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՆՕԹԵՐ



Առէն անոնք, որոնք չարաթը չարաթին վարժուած են կարգալ այս էջերուն մէջ իմ սովորական բողոքներս, անշուշտ կ'սպասեն կամ ըստ իմ ենթադրական խուռուցիկի (°) հոգի կուտան օրուան նիւթին՝ Բարեկենդանի վրայօք յօդուած մը կարգալու՝ որ չակէ թիւում գէմքերը ու պահ մը ժանգը առնէ խոցոտ ու քոտոտ սրտերու։ Բայց պէտք է խոստովանիմ որ՝ ինչպէս ո՛ր է օրիորդ իրեն ուղղուած դաշնակի հրաւերէն կը տատամսի ու կը շուարի, նոյնպէս ես, նոյն կացութեան կենթարկուելով երբ recommandé յօդուած մը սպասուի ինչ է կամ խնդրուի։ Սակայն եւ այնպէս պարտաւոր եմ չորս հինգ էջ մտածել հոս, օրուան նիւթին վրայ, սա տարբերութեամբ որ ուրիշներ գէմքեր կը մտածեն, եւ թուղթեր . . . :

Թող ներուի ինձ ուս Բարեկենդանը նմանցնել հոգեւարք հիւանդի մը, որուն՝ բժիշկը անդրաշխարհային ճամբորդ մը ըլլալը գիտնալուն՝ ամէն բան ուտել կը հրամայէ՝ անխտիր։ Միթէ նոյնը չէ՞ք ընել մենք ալ, խելքերնուս փշածը, մտքերնուս անցածը, սիրտերնուս սիրածը կրնենք կըլլանք ամենայն խայտառակութեամբ եւ ո՛ր եւ է դիտողութեան դէմ «Բարեկենդան է հոգ չէ» պատասխանը կը փակցնենք՝ ճակատաբաց։

Բարեկենդանը համարձակօրէն՝ վայելելու միակ գործիքը դիմակն է, թուղթէ կամ քնարչէ այն կեղծ ու այլազան գէմքերը, զորս մեր բուն գէմքին վրայ կ'անցնենք, երեսնուս ամօթի կարմիրը չի յայտնելու համար կարծես, ըրածնուս խայտառակ գիտակցութեամբ։

Այդ թուղթէ գէմքը որ կը ծածկէ բնականը, մղում եւ համարձակութիւն կուտայ մեզ արտառօքը գործադրելու, խայտառակութիւնը պարտկելու եւ սքողելու մեր ներքինը՝ դիտողներու եւ դիտողութիւններու դէմ։ Սա չէ՞ Բարեկենդան ըսուածը։

Բայց մինքն ասանկ զուարթ օրով փիլիսոփայի լեզու թափելու նպատակ չունենալնուս, մոտենք լուսն նիւթին։

• • •

Կէճէ սէֆա Ուստիկը չէ՞ք ճանչնար։ Բերայի կռնակը, Արտի Դլուխի վարօքը կը բռնակի ան միամօր աղջկանը հետ, զոր կարգեց անցեալ ձմեռ իր իսկ ձեռքովը պէճէ-րկով փեսան։ Տեսած անցուցած կին մը 50—60 տարեկան։ Դաւով աղջկան՝ Նաուդուհին՝ մօրը քիթէն ինկած է կարծես, ճիշդ անոր պէս ճատալոզ եւ մուկ պատերուն լուս տալու չափ աղուոր։ Իսկ խելճ ամուսինը Օլրէստ աղա ջուրը քաշած լափա մարդուկ մը, կնոջմէն աւելի շիտակ օղին սիրող եւ իրիկունները հաւերու պէս կանուխ քնացող, վաստակէր, քարէն հաց հանող, ոչ ալ բարկացոտ, երբէ՛ք ձայն հանող։

Թէ կին մը իր դառնուկի պէս ամուսինը ինչպէս վագրի կը փոխէ, պիտի տեսնէք քիչ մը վարը։

Բարեկենդանի երկուշաբթի գիշերն է։ Օլրէստ աղա, ըստ սովորականին կուամբամբուլին անկած, կը խորթայ տաք սենեկին անկիւնը բազմոցին վրայ։ Ուստիկ յաջորդ առաւօտուն երթալիք բաղնիքին համար մալի ներկ կը թրջէ սուրճի գաւաթիկի մը մէջ, մէկ կողմէն հինան կերցնելով պուտ պուտ, եւ Նաուդուհի, երկու ոտքը փռած ակնուրի վրայ, ձեռքը մաղերու հուսկին, պիչ պիչ կը գիտէր մօրկանը զբաղումը ու վերջապէս համբերութիւնը հասաւ։

— Էօֆ . . . լէօպէթ կուգայ կոր վըրա՛ս . . . Եսնի հէքիմցու հիւանդ եմ . . .

Մայրը առանց կարեւորութիւն տալու խօսքին . . .

— Չօք չէ՛յ . . . աս անգամուան պօյս պայաթ է եղեր . . . Երկու աչկը քէօւնայ եսպանճի տեսնալուն պէս քշեր է . . . :

— Ու՛ֆ . . . կլոխս . . . սիրտս կը գոցուի կոր . . . :

— Նալէթ չըլլաս չան զաւակ , քի աւանկ ինծի փակած ես , ըսելով կատուն կը տփէ մայրը , աչքին պոչովը աղջկանը նայելով . . . :

— Էն սօնը կը հաւնիս կոր սա վիճակիս , կէօյեամ քի կարգուած եմ հա՛ . . . չի հասնէիր կլոխս փաթթելու աս եռմուռնախոռախի սիւնկէր հէրիֆը . . . կէնձ արմուս ալ չի մեղքցար աճապա . . . :

— Ի՛նչ է քա կենէ օւթերդ այախլանմը՜ են եղեր , ինծի սնանկ կերեւայ կոր . . . Ի՛նչ կուզես մարդէն . . . պառկեր կը խռկա կոր . . . ամա ի՛նչ է , քեզիպէսներուն էլի այախլը ճանաւար կուզէքի տէօչէկը սօխախը փռէ տէ երեսը չի տեսնաս . . . :

— Մախսո՛ւս կընես կոր քի արունս դառնայ տէ եաթա՛խ իյնում տէյի , հա՛ . . . քա քեզի ո՛վ ըսաւ քի ներսիդիս խուռում է կապեր տէյի , իմ տարիքս աղջիկները . . . իշտէ անանկ :

— Էյ ի՛նչ ընենք , սանքի ի՛նչ ըսել կուզես կոր , միտք բանդ հասկնանք . . . :

— Հի՛չ ի՛նչ պիտի ըլլայ , վաղը գիշեր մուչինայ ըլլամ պալօ պիտի երթամ . . . :

— Նասը՛լ նասը՛լ . . . :

— Իշտէ ըսածիս պէս , սուռաթ պիտի դնեմ խըլըն պիտի մոնամ , դուրս պիտի ելլամ . . . :

— Էյ էրիկդ . . . խալիլ է նայինք , հէմ որի՛ հեա դուրս պիտի ելլաս աղջիկ , սանկ մէյ մը թօթուէ տէ օւթերդ թափէ . . . :

— Ինծի համար մարդ պակաս ըլլայ , բէք չըլլայ նէ միւսիւ Սարսախեանին խապար կը խրկեմ անոր հետ կերթամ . . . :

— Աստուծու կրակին չի գաս հէմէն վռթկած չուն , մախսուս կընես կոր քի սա հէրիֆը կլոխը առնէ երթա՛յ տէյի . . . հա՛ . . . :

— Եռմուռնախին կռողին պերանը երթայ , էրկնայ հէմէն . . . էրիկ է եղեր տէ ի՛նչ ֆայտա ունի , սա չէ՛ հալը . . . :

— Ես չէի ըսողը , ինչ ապուր կուզես նէ ան կեր . . . :

— Հէմ զաթը ան չիմանար քի . . . սէտիրին վրայ երկնաւուն պէս , կծիկը կը դընեմ , ան մինչօք ըտախին մարէնէ ես գործս տեսած կըլլամ . . . :

— Էյ կէս գիշերուն էլլայ տէ քեզ փրնտուելու ըլլա՛յ նէ , ես աս խռփած սուռաթովս քու տեղդ դէմը առնելու չեմ եա՛ . . . :

— Էս երթալէս ետքը իմանայ չիմանայ զարար չունի , ետքէն էս կուգամ երկու ճիւղէով սիրտը էրած չէքէրի պէս կառնեմ , առ գործին վրայ մի մտմտար . . . :

— Ամա՛ն . . . հիմակուան ճահիշները . . . ամա՛ն . . . վայ կլոխն , զաւալը էրկանդդ քի տիրի տիրի էրէցաւ . . . ամա ի՛նչ ֆայտա ծաքը կլոխս է , ըսելով կելլայ կը կայնի իր մազին ներկը աւարտելով , մինչ նոյն պահուն Օվրէստ աղա կէս մրափէն արթննալով , բոլորը իրենց սինեկը կը քաշուին և գիշերուան մութին մէջ ընդհանուր բուֆբուֆը կըսկսի :

* * *

Հետեւեալ իրիկունը Օվրէստ աղա Բարեկենդանի պատրուակով քի մը էվէլ փախցուցած տուն կը հասնի ճիշդ այն ատեն երբ Նառդուհի հայելին դէմը անցած կը բուռնայէր դէմքը , ատեն ատեն պատուհանէն դուրս նայելով և կամ սպասելով իր քաւալիէին՝ միւսիւ Սարսախեանի գալուստին :

Ճաշէն վերջ ըստ սովորականին երբ Օվրէստ աղա կրկին կը փռուի բաղմոցին երկայնքին , դուրսը Նառդուհի իր Սարսախեան գաւալիէին հետ սեւ տօմինօ մը հագած կծիկը կը դնեն ու ակնթարթի մը մէջ կանհետանան մութին մէջ :

Սատանան գործ չունի կըսեն , և իրաւամբ : Օվրէստ աղա ո՛վ գիտէ ինչ չար երազէ մը արթննալով աչքերը խոշոր խոշոր բացած կելլայ կը նստի . . . կսկսի չորս դին ղննել , մինչ կէճէ սէֆա Ուստիկ՝ վախէն ու դողէն եռմախ դարձած կծկուած աթոռին վրայ մուկի պէս աչքերը կը գոցէր կը բանար մօտալուստ փոթորիկին շոշորդը վրան :

— Նառդուհի . . . հո՛ս եկուր , ըսաւ ամուսինը ոտքի ելլելով , սա բալթօս բեր դուրս պիտի ելլամ . . . :

— Ի՛նչ մը տկար էր տէ կլոխը վար դըրաւ , եաւրուս , պօշ պան է ի՛նչ կայ դուրս պիտի ելլաս , դուն ճահի՛լ ես . . . :

— Ի՛նչ քէխեա՞ դրին , մաթուֆ ճատը , աղջկանդ ըսէ վար կայ , հիմա տունը կլոխդ կանցունեմ հա՛ . . . :

— Վո՛ւյ ոտքդ պագնեմ ինքզինքիդ եկուր օրդի, ասանկ ակում օրի արուհիդ կը դառնայ հոգիս, հիւանդ միճազսդ է Ըսինք . . . :

— Քա ո՞րի կըսենք կոր, աղջիկդ կուզեմ աղջիկդ . . . Ըսէ վար գայ . . . :

— Էյ չիտակը կուզես նէ . . . :

— Հէ՛ . . . :

— Ի՞նչ գիտնամ դող կելլամ կոր ներսի էլաթներս կէնդս կելլան կոր . . . :

— Փսխէ՛ . . . դուրս տուր նայինք, ի՞նչ կայ . . . ի՞նչ եղաւ . . . :

— Քա հաւրուս դող կելլամ կոր, հանդարտէ քի Ըսեմ . . . ի՞նչ ծուռ եկաւ թէփէյիս . . . :

— Տէ հայտէ կըսեմ կոր, Կէճէսէֆա ես ի՞նչ խառնաճոռոզ ես . . . կնիկս, աղջիկդ կուզեմ, տէ առջիս ինկիր տէ կտիր թէսլիմ Ըրէ նայիմ, հայտէ չալը կլոխդ առ . . . :

— Քա՛ աշկդ սիրեմ փեսայ աղաս պաղըրսախնեհրուս կիչնայ կոր . . . :

— Սիրտիդ իչնար տէ լմնայիր հէմէն, մօռտովինաճի բոստալներ, դուռն ալ, աղջիկդ ալ, հա նայիմ ո՛ր պալօղը գնաց նէ ծառքովդ օռթան պիտի հանես, վաղն ալ տիրոր խուճխարու չմէնտըֆէրին պիլէթը իրէք պիտի առնեմ . . . :

— Ես քեզի բան մը Ըսեմ, եղաւ Ըլաւիքը քալէ երթանք տէ ի՞նչ կուզես նէ ան Ըրէ, ֆախաթ հախսըզ ես . . . :

— Հախսըզ ես Ըսելուդ էչ ես Ըսէ, հա՛, մի քաշուիր իշտէ ասանկ քնացող էրկանը օյնախ կնիկ . . . :

— Տէ՛ . . . աղջկանս միտը մուտէր, կէնճին հէլպէթտէնէ արուհը կ'եփի տէ ֆըրսանթ կտնայ նէ օռթերը կը թափէ ի՞նչ գիտեմ . . . :

— Ծանրմ հիմա դուրս իյնանք տէ մենք ալ օռթերնիս թափենք, Ըսելով սենեկին կազը կը պզտիկցունեն ու անխօսուկ դուրս կիյնան, փողոց՝ ուր Բարեկենդանի ճուռճինան ծայր աստիճանին հասած էր Բերայի շիտակը . . . :

— Ինձի նայէ Օլրէստ աղա, ճաշիլուժեանըդ կիտնալուէս, ան բոստալները իլէն խայնար ճուռ տէլիխանըներուն եռվան,

սա ուր է պալօղ է, ի՞նչ է, ո՞ր թառաֆն է ցուցուր նայիմ . . . :

— Աղջիկդ չէ մի քիթդ վեր քաշէ քի հոտը առնես տէ չափուխ կանաչ, ես ի՞նչ գիտնամ . . . :

— Էյ ալթըն խառնախսի մը տահէկիդ . . . սա նայէ Ըռարուժալը շուռ Ըրաւ ինձի քա . . . իմ աղջիկս է նէ քու ալ կնիկդ է, դուռն ալ քիթդ վեր քաշէ, հէմ քուկդ տահա կէնճ ու կանանչ է . . . :

— Տէ հայտէ ատըմ առ, ղէրէ տամարս ներս մատ մատ խաղարմիշ կըլլան կոր . . . :

— Բաթլամիշ Ըլլաս հէմէն հէրիֆ, սա նայէ քիթէս պուտ պուտ ճըռիկն ալ պակաս չէ կայնէ նայիմ Ըսելով խանութի մը դրան առջեւ կեցող անձանթի մը . . . :

— Քա պանա պագ, աֆ կընես իրար ալ չենք ճանչնար ամա, եանրմաքի փեսամ տըր, եապանճի չէ, չեղլաս ծուռ միտքի երթաս, պէն տէ չի հասնէի Ըլլալու դառնսընըն անասը եմ . . . :

— Նէ վար մատամ . . . նէ իսթէրսիչիդ . . . :

— Քա տուր քի նախեմ . . . քըզըմ պէլքի թանըրսըն, Նարդուհիյում շու գիտես պէլքի միտքդ է, տիւն, գօճասընըն հազը իշին, միան պալի լիէն, պէճէքլի թըռհալա ալմայա չըգտը պուրայա . . . :

— Էյ աննամայօրում . . . մատամ . . . :

— Քա ճանրմ, չի քալես ի՞նչ կայնէր մարթալալ կը կարդաս կոր մարդուն . . . հէրիֆը պէճէքլի թըռհալան ի՞նչ գիտէ . . . :

— Էյ չի հաւնեցար նէ դուռն մէջ ինկիր, չէնէ ձգէքի բոստալին իզը կտնամ . . . Ըսելով կրկին կը շարունակէ իր բացատրութիւնը անձանթին . . . :

— Իշտէ երկու աշկը քէօռնայ, Բարեկենդան է տէյի օռթլանտը օռթլանտը մուշինա օլտու լասղա կիթտի, իշտէ փեսամ տա կէս մրափտան ետքը, էյ Աստուծու համար պիտի Ըսեմ սիրով տըրլար ինչուս պէտք հոգի պիտի տամ . . . իշտէ սր վախիթ քի, Նաւդուկումը պուլմատը իսէ մուլս մընէ թէփէսինտէն չըգտը տէ . . . :

Նոյն ատեն մասքէները խաղալով ցատկելով մօտերնուն կ'անցնին, մինչ Ուստիկ տուտու խօսքը կտրելով . . . :

— Ծօ կայնեցէք մուշինաներ . . . Նառ-
դուհի . . . ծօ ձեր մէջէն , Նառդուհի զորն
է նէ սուռաթը բանայ . . . :

— Լէ' Լէ' Լէ' . . . բըռ . . . ո' ո' ո' . . . :

— Փռուիք տէ պէօճէկներու կեր ըլլայ
վուճուանիդ , սըյրբի բօստալներ , քա ո'րն
է Նառդուհի . . . տոնոյ մէջը մէյմը չի
մտնաս Օվրէստ աղա , կիտես քի ասոնոյ
մէջն է , նայէ կէօքսին պիչիմը թըպլսը քու-
կինիդ կըլմանի կոր . . . :

— Տէ հայտէ էյլէնիմը մըլլար տէ քալէ ,
տահա կրակ կը կարիմ կոր :

— Եա չէնէ սա ֆէնէնլի տունէն ներս
մանանք պէլքի հոն է , ըսելով ելեփերէք
Օտէօնի կը մօտենան :

— Բայրի կուն ձեզ . . . :

— Պիլէթ միւսիւ . . . :

— Մըրսի վրադ ծովի պաղնիք է զա-
հէր քի պիլէթ կուգես կոր . . . եալվարը
լաս նէ սօլ ոտքս ներս չեմ դնէր . . . :

— Էօֆ ճանրմ պիրիսինի պաղաճաղըզ
տէ չըգաճաղըզ . . . :

— Էյ էյվալլահ սիրտիդ . . . աղջիկը
ճահլուլթին մը ըրիս է տէյի , կնիկսէ տէյի
չըսէր կոր տէ եապանճի պէս պիրիսի հէ' :

— Բաթլամիչ եղիր տէ պապանճէ իքի
խալուլուլու Ֆընտըլս սուրաթլը ճատը . . . :

— Օն քուռուչ միւսիւ . . . տուտուեա
անքուռ եօք . . . :

— Արեւը սիրեմ, բիշկին մարդուն գործն
ալ պաշխայէ , նայէ նասըլ հասկցաւ քի
Նառդուհին տուտուն եմ տէյի տէ փարայ
պիլէ չառնէր կոր . . . քա դուղում եալ-
րուս ներտէ' . . . պուրտա՞ տըր . . . :

— Բիմի առատընըզ տուտու . . . :

— Բա սուս օրդդի աղջիկիմ . . . Նառ-
դուհիմ , երկու աչկը քէօնայ երկու աչկի
առալըս պորտը դուրս ձգեց տէ աս փեսաս
ալ ֆիթիլի ալտը . . . :

— Չէնէդ քէօն կապ ըրէ տէ գործեր-
նիս նայինք , կ'ըսէ Օվրէստ աղա բարկու-
թենէն խըղամուխի պէս դէմքը կաս կա-
պուտ . . . :

— Բա ճանրմ ձգէքի հասկցունեմ մար-
դուն , պէլքի տեսեր է Նարդուհին հոս
մտնալը . . . չօգ չէյ . . . :

— Էյ բէք էյի կիրինիդ իչէօխէ , պա-

գինիդ , ֆագաթ նէ զաման տանա եաբաճաք ,
օ վագըթ անքուռ վէռէճէքսինիդ :

— Էյ մէրսիլէրիզ , միւսիւ . . . հէմէն
Աստուած սիրտիդ կէօրէ տայ , ըսելով դո-
քանչ ու փեսայ ներս կը մտնան , պարա-
սրանը , ուր անթիւ անհամար զոյգեր , բառէ
թէ մասքէ կը պարէին տաքօրէն :

Հանրային պարահանդէսները գիտցող-
ներուն չէ խօսքս , իսկ անոնց որ գաղա-
փար չունին այդ պարասրահին ներքին կազ-
մակերպութեան վրայ , երկու խօսքով բա-
ցատրենք :

Լուսաղողը ընդարձակ սրահ մը , որ ընդ-
հանրապէս թատրոնինը կըլլայ : Օդային
կազերը իրենց վառ լիզուն դուրս ձգած աչ-
քառու լոյսեր կը պոսթկան , որոնց շնորհիւ
մասքէներու գոյնզգոյն քուռչերը , մետաքս-
ներու պէս կը փալփալեն : Վերը նուագա-
ծուաց խումբը քրտինքներու մէջ անընդ-
հատ կը զարնէ վիւն Քուքուլ բօլքան , որուն
թէմբօն պարողներ պօլ կան : Վարը տիւի-
թօնը չիֆթէ խուլուխու կառնօն ֆուաքը
տատանելով , կը ջրօտի այս համայն աէքօթէ
տամաներուն մօտ , մինչ հատընտիր հաւկիթ-
ներ կը գալարուին լօթերու եզերքը , միշտ
կլոր միշտ չըջուն :

Ահա այս տեսակ սալօնէ մըն է որ ներս կը
մտնեն մեր կէճէսէֆա Ուստիանէ տուտուն
իր փեսին հետ , որոնց նկարագրականը մեր
յաջորդ թուով պիտի պատկերացնենք , Մեծ
Պահլի ճանճրացուցիչ եօթը շարաթներու
առաջին տաղտուկը փարատելու համար :

ԼԻԼԱ

ԳՈՀԱՐՄԱՏԵՆԻԿ հայ տղոց , որ կը պա-
րունակէ բարոյական գեղեցիկ պատմու-
թիւններ , նկարագրութիւններ և տոհմային
սովորութիւններ , պարեր ու խաղեր :

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
տղոց տարիքին յարմարցուած միակ գիւ-
րուսոյց քերականութիւնն է պատկերներու
վրայ սովորեցնող :

Դին Ա. մասին 50 փարա , Բ. մասին 100
իսկ Գ մասին 4 զրուչ :

Կեդրոնատեղին է ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Մէրճան փողոց թիւ 57

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի ԹԵՐԹՕՆԸ 4

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Մ. Սէնթէլ սապէս շարունակեց տարիներով երեւութական մահուան մէջ թաղուելու մասին, իր խորհրդածութիւնները:

— Սկզբունքը ընդունուած է ալ: Այս վիճակին մէջ տարին մը մնալէն աւելի դժուար ըլլալու չէ տասը, հարիւր, հազար տարի մնալու Բայց հապա նախապատմական ժամանակներու հոկայ փիղը, մամոնթը: Ո՞վ կրնայ երբեք չափել թաւալող տարիներու թիւը, այն օրէն ի վեր, երբ այդ հսկայ անասունը բեւեռային սառոյցներուն մէջ բռնուեցաւ, մինչև այն օրը երբ Բոլնկուզ ձկնորս մը 1789ին գտաւ զայն սառուցեալ ծովին հզերքը, խոշոր սառնակոյտի մը մէջ, որ Լէնայի գետաբերանին մօտ խրած էր: Հաստատապէս, հազարաւոր տարիներ: Այդ տիտանեան փիղը լաւ պահուած էր, այնպէս որ ամբողջ եղանակ մը, շրջակայ Եւրոպէի ցեղը կրցաւ անոր միսը ուտել, կերցնել իր շուներուն, մէկ կողմ թողլով գայլերուն և ճերմակ արջերուն խնայած մեծ բաժինը: Ո՞վ կրնայ ապացուցանել թէ այդ նախապատմական փիղը, որուն ցեղը այժմ անհետացած է, վերստին չէր կրնար ապրիլ, ինչպէս վերոյիշեալ սառած ձուկերն ու գորտերը, երբ փոխանակ յոշոտուելու, զինք պատող սառոյցի պատունէն տաքցուէր աստիճանաբար...: Այն ատեն գուցէ անհետացած դարերու այդ ժամանակակիցը պիտի ելլէր իր անորոշ քունէն...: Բայց վերջապէս, ահա ե՛ս, ես որ կ'ապրիմ...: Ա՛յ ի՞նչ փնտւեմ թէ այս աննախընթաց երեւոյթը ի՞նչպէս կատարուեր է: Իրաւանութիւնը կայ ակներեւ, անհերքելի...: Տեղը չկայ հիմա քննելու

թէ ի՞նչպէս ապրեցայ, ատկայ ետքի գործ է և նուազ կարեւոր: Հիմա ապրի՛նք...: Այս նոր կեանքը քանի մը ժամ միայն պիտի տեսէ և հետեւաբար խիստ չահեկան է որ ամբողջովին անոր նուիրուիմ...:

Այս միջոցին տաւիղի ձայնին չափ նրբադաշն ձայն մը մրմնջեց:

— Է, լա՛ւ, օտարական, դեռ չաղատեցա՞ք այս շատ բնական անակնկալին ազդեցութենէն, անակնկալ, որուն վրդով արտայայտութիւնները մեզ ամէնքս փախցուց:

— Ներեցէ՛ք ինձի «Մեծ-ծերունի պարոն» պատասխանեց Մ. Սէնթէլ Չինացիներուն մէջ ծայրայեղ քաղաքավարութեան համար ընդունուած այս բացատրութիւնը գործածելով: Բայց ես կը հիանամ միշտ ձեր հրաշալի դիւրազգացութեանը...: Ամէն ջանք պիտի ընեմ այդ պարագան միշտ միտքս պահելու, որովհետեւ սկիզբէն ի վեր այսպէս ինքզինքս անհաճոյ դարձնելու գէշ փոխարինութիւն մըն է ձեր բարեքներուն համար:

— Օ՛հ, մենք կը հասկնանք և հաճոյքով ներողամիտ կը գտնուինք, մեր սովորութիւններուն անգէտ ըլլալուդ համար: Երբ մարդ տասը հազար տարի կ'ապրի և այսպէս կարծնայ յանկարծ ամբողջովին ձեւափոխուած ոչխարի մը մէջ...:

— Ըսէ՛ք վեր ի վայր չըջած, քանի որ ճշմարտապէս չեմ գիտեր թէ նոյն մոլորակին վրայ կ'ապրիմ. պատասխանեց Մ. Սէնթէլ յամր և ցած ձայնով մը ակնոցաւոր մարդուկին որ եկաւ նստաւ մտերմօրէն անոր մօտ: Բայց իրերը ո՛րչափ շրջափոխուած ըլլան, կը խոստանամ ալ քանի մը համար

չզարմանալ . . . ժամանակ չկորսնցնել . . . :

— Եթէ թոյլ կուտաք, ըսաւ ակնոցաւոր մարդուկը, պատրաստ եմ ձեզի բացատրելու մեր դարուն ամէն մէկ բաները որոնք ձեզի համար այնքան խորհրդաւոր եւ անակնկալ են: Իմ տարիքս աշխատութիւններէս եւ ուսումնասիրութիւններէս աւելի փորձառութիւն մը տուած են ինձ եւ ես ուրախ պիտի ըլլամ այժմ անցեալը ձեզի սովորեցնելու:

— Բիւր չնորհակալութիւն Մեծ-Մերունի-դարուն, ձեր հրամաններուն պատրաստ եմ:

— Ես եմ որ ձեր ծառայեմ, մեծահոգակնախաճայր, պատկառելիք դու « քուսիյիւն » (քնոթեան մարդ):

— Կը հաճի՞ք նախ ըսել թէ ինչպէս կը գտնուիմ Ափրիկէի արեւմտեան եզերքը, որուն դուք տնօրինակ անուն մը կուտաք, այսինքն արեւմտեան Ձինստտան կը կոչէք:

— Հաճոյքով: Եկած էք պարզապէս մեծ սառնակոյտի մը մէջ որ հոսանքներուն խաղալիք ըլլալով ցամաք ինկած էր մոկընթացութեան պահուն:

— Ինչպէս . . . սառնակոյտ մը ինչպէս կրնայ գտնուիլ ատանկ միջախալի մը մէջ:

— Ասանկ դէպքեր աւելի յաճախ կը պատահին դարնան:

— Եւ այդ սառնակը չեն հալած այդչափ երկար ճամբայ մը կտրած ատենին . . . :

— Այդ հեռաւորութիւնը ձեր կարծածէն աւելի քիչ է:

— Բարիքի . . . :

— Բարի՞ք ըսիք . . . : Ատանկ անուն չեմ գտներ աշխարհագրութեան մէջ . . . :

— Ինչե՞ր կը լսեմ. մըմնջեց Մ. Սէնթէզ ատչանքէն ընկճած: Բայց ուրեմն աշխարհի բնակելիութեան սահմանը նուազած է:

— Այո, բայց ժողովուրդները դարձեալ հանգիստ կ'ապրին այդ չըջանակին մէջ: Պիտի համոզուիք այս բանին, եթէ մեր այժմու երկիրները տեսնէք: Սա միայն գիտցէք թէ երկարութեան 48 աստիճանէն վեր մարդ չբնակիր:

— Մեր ժամանակները մինչեւ 68 աստիճանը բնակելի էր:

— Այժմ փոխուած են: Նոյն իսկ 48 աստիճանին վրայ չեմ գիտեր ինչո՞ւ կը բնա-

կին մէկ քանի թշուառ բնակչութիւններ, որոնք ապրելու համար ստիպուած են մինչեւ 40րդ աստիճանը ընտրել:

— Ուրեմն, ուրեմն իմ ճանչցած բոլոր երկիրներս անհետ են եղեր, ա'լ Եւրոպայ կայ. իր զօրութիւնը, կորովը, իմացականութիւնը, ամէնքը անհետ եղած են, սառոյցներուն տակ թաղուած են, իրմէ միայն յիշատակ մը, աւաստել մը, անուն մը կը մնայ . . . :

— Մեր երկրագնդին արտաքին ձեւը իրաւ ալ խիստ երկար ատենէ ի վեր հիմնական փոփոխութիւններ կրած է . . . :

Բայց վերադառնանք, եթէ կոչէք այս եզական դէպքին որ պատճառն է ձեր մեր մէջը գտնուելուն . . . : Այսպէս, ինչպէս պատիւը ունեցայ ձեզի ըսելու, ծիւղն խոշոր սառնակոյտ մը եկաւ ինկաւ եզերք: Մարդ մը կար անոր մէջ կեղեւոտածի պէս: Հազար ու մէկ զգուշութիւններով զայն հանեցինք եւ կեանքի բերինք . . . այս մարդը դուք էք . . . :

Դուք մեզի ըսիք թէ ձեր երեւութապէս մեռնելէն, ի վեր 10,000 տարի կ'ըլլայ . . . : Դէպքը, որչափ ալ տարօրինակ, իրական է սակայն, քանի որ հոս էք այժմ դուք եւ այն հնադարեան պարունակը որուն հետ մէկ մարմին կազմած էիք: Կամ տարի մը սնունդ էք, կամ 10,000 տարի. ձեր կեանքի վերադառնա-

լու դէպքը ոչ աւելի ոչ նուազ զժողար էր, քանի որ ձեր կազմաւորութիւնը պահուած էր հրաշալի վիճակի մը մէջ:

— Շատ երջանիկ պիտի ըլլամ եթէ սովորեցնէք ինծի թէ սառած մարմինս ինչպէս դարերով պահած է իր զօրութիւնը, իր մտքի կարողութիւնները, այս անգործ, անգլխալ գոյութիւնը փոխելով էակի մը որ ձեզ կը տեսնէ, ձեզ կը լսէ եւ կը հասկնայ:

— Շատ պարզ է: Ձեր ցամաք ինկած պահուն ես կը նախագահէի Թոմպուքթույի աղգային ակադեմիային:

— Ո՞ր ազգինը:

— Պիտի ըսեմ: Այժմ երկրիս վրայ երկու ցեղ կայ: Մէկը մերինը եւ միւսը այն որ քիչ ատենէն պիտի ճանչնաք . . . : Ակադեմիային նիստը ձգելով հոս եկայ, որովհետեւ խիստ շահեկան դէպք մըն էր պատահածը:

— Բայց Թումպուլթու, Ափրիկէի այն երկիրը, որ Սուտանի արեւելեան մասն է, ծովեզերքէն շատ հեռու է, կարծեմ 15,000 քիլոմետր հեռու է . . . :

— Ձեմ գիտեր, այդ քիլոմետր ըսածդ ի՞նչ է: Միայն սաչափը կրնամ ըսել թէ անկից հոս ճամբան քանի մը վայրկեան միայն կը տեւէ . . . : Մեզի համար հեռաւորութիւն գոյութիւն չունի . . . : Շատ նուրբ զգուշութիւններով ձեր պատեանները քակուեցան, ձեր հագուստները հանուեցան և բերեցի կտորի մը վրայ երկայն մը պառկեցողին ձեզ . . . :

— Յետոյ . . . :

— Յետոյ, երկոտասանեակ մը խիստ կորովի երիտասարդներ, չըջանակ մը կազմեցին ձեր շուրջը և ձեռքերնին իրարու միացուցած տարածեցին ձեր անզգայ մարմինն վրայ և ձեզ ընկղմեցին տեսակ մը մագնիսական հոսանքուտի մէջ, որ իրենց մարմինն առաջ կուգար:

— Բայց Թաւաօ-եէ (Մեծ-ծերունի պարոն) ինչ որ ինծի կըրէք հրաշապատում բան մըն է: Մեր ժամանակները այդ միջոցը ի գործ կը դնէինք սալօնի խաղ մը կատարելու, սեզանները դարձնելու համար: Թէեւ կը պատահէին ալ որ սեզանները մերթ կ'ընդդիմանային այդ շարժման դէմ:

— Ներկեցք որ ըսեմ Շիէն-չունկ (Նախածին), հող ծանր մարդոց համար չահեկան զբաղում մը կայ: Դուք լուրջ մարդ մը կ'երեւաք թէեւ Մաօ-չիններու (Թանձրամազ մարմին) ցեղին կը պատկանիք: Վերջապէս կ'ընդունիմ զաղափարները, յանուն այն ներողամտութեան որ մեր նկարագիրին տիրող տարրն է: Ժամանակաւ ձեր կենդանական այդ հոսանքուտը կը գործածէիք սեղանները դարձնելու մինչ մենք այսօր զայն կը գործածենք անասունները կենդանացնելու համար: Յառաջդիմութիւն կայ, այնպէս չէ . . . :

— Անտարակոյս զայն կ'ընդունիմ ուղեմ չուզեմ, քանի որ անոր կինը անոր օրինակը ես եմ, պատասխանեց Մ. Սէնթէզ: Խնդրեմ ըսէք, առանց ուրիշ շարժման մը, ձեռքերու այս գործածութիւնէն և մոտաեւելու մէջ առաջ եկած մաքնիսական այս հոսանքէն

արթնցայ . . . : Զերմութիւն, չիուտ, արհեստական շնչուտ, ելեքտրականութիւն չը գործածուեցաւ . . . :

— Ի՞նչ հարկ: Մեր ունեցած այս կենդանական զօրութիւնը այնքան ազդեցիկ է որ ջերմութեան, շարժման, ելեքտրականութեան, կեանքի տեղը կը զրաւէ մեզի համար, ա՛յնքան զօրեղ որ կը բռնէ արտաքին, այսինքն բնութենէն առնուած բոլոր ուժերուն տեղը և մեզի ճշմարտապէս կը դարձնէ երկրին իշխանները:

— Իրաւ ալ արտակարգ անբացատրելի տպաւորութիւն մը զգացի, ցորչափ կարթննայի իմ թաղմադարեան մահաքունէս: Իմ ամենէն անզգայ կողմերս խռոված էին ցնցումներէ, որոնք կամաց կամաց կը կենդանացնէին զանոնք: Ձեմ գիտեր ի՞նչ խորհրդաւոր, անդիմադրելի և բարեբար զօրութիւն մը անցած էր կազմաւորութեանս մէջ, զայն անսահման երանութեամբ մը ողողելով: Յետոյ կամաց կամաց արթնցայ, ինքզինքիս գիտակցութիւնը ունեցայ, կարծես թէ կը գտնուէի դեռ հոն, վարը, սառնակոյտին վրայ, այն պահուն ուր կը կարծէի թէ կեանքի բեռէն միանգամ ընդ միշտ ազատած էի . . . : Բայց ձեր կարգին Մեծ-Մերունի Պարոն, ըսէք թէ ո՞վ էք դուք որ այդքան աննման կարողութիւն մը ունիք, դուք՝ որուն մէջ բնաւ չեմ գտնէր մեր ժամանակները ապրող մարդոց ոչ մէկ նկարագիրը, դուք որ ինծի կ'երեւիք խորհրդաւոր լուսապսակի մը մէջ պարուրուած էակ մը այս ա՛յնքան անհաւատալի կերպով փոխուած երկրիս վրայ: Ըսէք ինծի, վերջապէս, դուք որ չեմ գիտեր աստուածային ի՞նչ առանձնայատկութեամբ երկրէ երկիր կը փոխանցուիք, լոյսի պէս միջոցին շուրջը կը յածիք և ունիք ուղեղի հրեշային մեծութիւն մը որ անհուն զօրութեան մը աղբիւրն է: Բացատրեցէք կը պաղատիմ ձեզի . . . :

(Շարունակելի)

ԱՐՏՈՑԱՏԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԳՍԵԱՆ

Պապ. Ալի Գառէսի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐՁԵՆԻՍՑ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաղեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ տո-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց թէյրոհիւններու և
տղայոց չիք և գիմաղկուն ֆաթիլաներու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
շերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ է .


Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՋԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահագրատի, Ճեյալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ

Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԻՌԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի Է. Գրաներու. Կրամֆոնի
Ե. Երկկողմ Բլագներու. Կեդրոնա-
տեղի Պահագրատի, Հաճի Պեքի
Էֆենտի կից, Եայտը խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պահագրատի
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
գրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք միջիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշագրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: